

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԻՐԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԵՐՄԱՆԵՐԵՆՈՒՄ

ABSTRACT

TENDENCIES OF THE STRUCTURAL IMPLEMENTATION OF SENTENCES IN MODERN GERMAN

The article examines several trends of the structural implementation of sentences in modern German. As a result of the study it has become clear that there is a tendency towards the expansion of the substantive group and the reduction of the frequency of the use of subordinate sentences in case of the usage of the substantive group and subordinate sentences. As for the “frame structures” in German, in this case there is a clear tendency towards “framelessness”. The analysis of the “passive field” in German has shown that alongside with the paradigm of the latter there are such verb structures which can be considered synonymous to the passive structures.

Key words: *tendency, syntactic unit, grouping, “framelessness”, linguistic economy, substantive group.*

РЕЗЮМЕ

ТЕНДЕНЦИИ СТРУКТУРНОЙ РЕАЛИЗАЦИИ ПРЕДЛОЖЕНИЯ В СОВРЕМЕННОМ НЕМЕЦКОМ

В статье рассматриваются несколько тенденций структурной реализации предложения в современном немецком языке. В результате исследования стало ясно, что в случае применения субстантивной группы и второстепенных предложений наблюдается тенденция к расширению субстантивной группы и уменьшению частоты употребления второстепенных предложений. Что касается “рамочных структур” в немецком, в этом случае четко наблюдается тенденция структур без рамок. Для пассивных конструкций в немецком, становится ясным, что рядом с парадигмой последнего имеются такие глагольные структуры, которые могут считаться синонимами пассивной структуры.

Ключевые слова: тенденция, синтаксическая единица, группировка, языковая экономия, субстантивная группа.

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննության են ենթարկվում ժամանակակից գերմաներենում նախադասության կառուցվածքային իրացման մի քանի միտումներ: Ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ գոյականական խմբի և երկրորդական նախադասությունների կիրառման դեպքում նկատելի է գոյականական խմբի ծավալման և երկրորդական նախադասությունների նվազ գործառական հաճախականության միտում: Ինչ վերաբերում է «շրջանակային կառույցներին», այս պարագայում հստակ տեսանելի է «շրջանակագերծման» միտում: Անդրադարձ կատարելով «կրավորական դաշտի» վերլուծությանը՝ պարզ է դառնում, որ վերջինիս հարացույցի կողքին առկա են բայական այնպիսի կառույցներ, որոնք կարող են համարվել կրավորական կառույցի հոմանիշներ:

***Բանալի բառեր՝** միգրում, շարահյուսական միավոր, խմբակցում, շրջանակագերծում, լեզվական խնայողություն, գոյականական խումբ:*

Ժամանակակից գերմաներենում նախադասության կառուցվածքային իրացման միտումներին անդրադառնալիս առանցքային են գոյականական խմբի ծավալման, երկրորդական նախադասությունների նվազ գործառական հաճախականության, շրջանակագերծումների, ինչպես նաև ներգործական/կրավորական սեռերի հակադրության հետ կապված որոշ հարցադրումների պարզաբանումները: «Միտում ասելով՝ հասկանում ենք որևէ գործընթացի սկիզբ, շարունակություն կամ ուղղություն, և այն չի վկայում այն մասին, որ զարգացումն արդեն ամբողջությամբ ավարտվել է»:

Անվանական խմբի աճը և ստորադասական նախադասության ծավալի նվազումը վաղուց ի վեր փորձել են պարզել շատ լեզվաբաններ: Կ. Կորնը այս կապակցությամբ նշում է սեռականի շարքը և բնութագրում է սա որպես «հիմնական» նախադասություն (ein serieller Satz)

(Korn, 1962:126): Ըստ նրա՝ բարդ նախադասությունը կազմվում է սեռականով հանդես եկող գոյականական խմբերով, և նմանատիպ կառույցների աճն էլ սերտորեն կապված է գոյականացման անհրաժեշտության կարևորության հետ: Այս գործընթացում առաջնային է գիտության լեզուն:

Ն. Էգերսի կարծիքով, 19-րդ դարի բայական համակարգում տեղի ունեցած փոփոխությունները կարող են արդյունք լինել 20-րդ դարի գոյականական խմբի հետևյալ միտումների՝ ձգտում տեղեկության առավել հստակ ընկալման, նախադասության կրճատում, ստորադասական նախադասության հետընթաց և «խմբակցում» (Blockbildung) (Eggers, 1983:45): Մենք ևս համակարծիք ենք այն տեսակետին, որ լեզվում մի կառույցի աճը պայմանավորված է մյուսի նվազմամբ: «Խմբակցումն» իմաստային առումով ավելին է ներառում, քան Կ. Կորնի նշած «սեռականի շարքը»: «Խմբակցում» ասելով՝ Էգերսը հասկանում է նախադասության այն բոլոր տարրերի ամբողջությունը, որոնք իրականացնում են անվանական խմբի ձևավորումը: Հիմնականում դրանք են՝ սեռական որոշիչը (ինչպես՝ *der Bereich des Wortschatzes*), նախդրավոր որոշիչը (ինչպես՝ *die Fähigkeit zum Lernen*) և հարակատարային որոշիչը (ինչպես՝ *zu einem verstärkten Bemühen*): Այսինքն՝ խմբակցումը տեղի է ունենում, երբ մեկ կամ մի քանի որոշիչ ընդարձակում են նախադասության այս կամ այն անդամը: Գրավոր լեզվում քիչ չեն նաև այն նախադասությունները, որոնցում շատ որոշիչներ խտանում են նախադասության միայն մի մասում (ինչպես՝ *Die obigen Darlegungen wollen Anstoss sein zu einem verstärkten Bemühen um Effektivierung des Sprachunterrichts im Bereich des rezeptiven Sprachkönnens*):

Ժամանակակից գերմաներենում գոյականական խմբի նկարագրությունն ամփոփ կերպով ներկայացնելով՝ կարող ենք նշել չորս հիմնական պատճառ շարահյուսական այս կառույցի լայն տարածման համար. 1) գոյականական խումբն ընկալունակ է յուրաքանչյուր իմաստաբանական-շարահյուսական հարաբերությունների նկատմամբ, 2) այն կարող է օգտագործվել յուրաքանչյուր շարահյուսական գործառնությամբ,

3) այն հատուկ ձևավորված շարահյուսական միավոր է, 4) վերջինիս հաճախակի գործածումը կապված է ստորադասական նախադասության հետընթացի հետ: Ընդհանուր վերլուծությունների հիման վրա կարելի է ասել, որ ստորադասական նախադասությունը ևս լեզվի զարգացման որոշ փուլերում (հիմնականում 17-րդ դարում) շատ ավելի հաճախ է հանդես եկել: Այս ամենով հանդերձ, սակայն, կառույցի նվազման միտումն ակնհայտ է: Ոչ պակաս կարևոր է նաև նշել այն իրողությունը, որ արդի գերմաներենում ստորադասական նախադասությունները որակապես տարբերվում են 18, 19, 20-րդ դարերի ստորադասական նախադասություններից: Ներկայումս դրանցում բովանդակության տրամաբանական ձևափոխումն իրականացվում է ավելի քիչ շաղկապներով, ուստի հարաբերական և *dass* շաղկապով նախադասություններն ամենահաճախ հանդիպողներն են և կարևոր օղակ են հանդիսանում տեղեկությունների փոխանցման, ինչպես նաև երրորդ անձի կարծիքները, մտքերն ու համոզմունքները հաղորդելու համար (X *vertrat die Auffassung, dass...*; Y *ist der Meinung, dass ...*; Z *ist davon überzeugt, dass ...* և այլն): Ասենք նաև, որ *dass* շաղկապի նման հաճախակի գործածումը բացատրվում է վերջինիս բազմիստատության և տարաբնույթ գործառույթներ իրականացնելու փաստի հետ (ինչպես նպատակի պարագա (*so ... dass*), պայմանի պարագա (*im Falle, dass ...*), պատճառի պարագա (*daran, dass...* և այլն):

Կրկին անդրադառնալով անվանական խմբերին՝ կարևոր ենք համարում նաև այն հարցի պարզաբանումը, թե ինչպես են նկարագրված փոփոխություններն ազդում հաղորդակցական և ընկալման գործընթացների վրա, և ինչպես են ընկալվում ծավալուն անվանական խմբերով փոխարինված նախադասությունները: Լեզվական խնայողության տեսանկյունից վերջիններիս կիրառումը բավականին հարմար է բանավոր հաղորդակցվելիս: Միևնույն ժամանակ սրանք պարունակում են ոչ թե քիչ, այլ ավելի շատ տեղեկություն, որի հետևանքով էլ հակասական իրավիճակ է ստեղծվում ներկայացվող ձևերի և բովանդակության միջև: Մտացվում է՝ նշանների քանակությունն ավելի է փոքրանում, իսկ

տեղեկությո՞ւմ մեծանում, ինչը թերևս անհանգստացնող փաստ է, քանի որ այս դեպքում հնարավոր է, որ տեղեկություն ընդհանրապես չընկալվի և չհասկացվի (Polenz, 1984:31): Այս վարկածը, սակայն, այնքան էլ ընդունելի չէ, քանի որ այս շարահյուսական կառույցը գործառական տեսանկյունից ոչ թե ամենասակավ, այլ ամենահաճախ գործածվողն է:

Ըստ երկրորդ վարկածի (որն ավելի անհավանական է, քան առաջինը)՝ անվանական խմբում բառերի և բառախմբերի միջև հարաբերություններն այնքան էլ հստակ արտահայտված չեն, որքան ստորադասական նախադասություններում: Հավանաբար այստեղ խոսքը սեռական որոշիչների շարքի մասին է: Սակայն շատ նախդրավոր որոշիչների դեպքում ևս տրամաբանական կապերն աղոտ են, եթե նկատի ունենաք, որ դրանցից շատերը նաև փոխաբերական իմաստով են հանդես գալիս (ինչպես օրինակ, „Für Sendungen unter persönlicher Anschrift...“; „Auf Grund des § 4 Ziffer 8 der Ersten Verordnung zur Durchführung und Ergänzung des Gesetzes über den Fischerschein vom ... (Braun, 1979:124)): Թյուր կարծիքներ գոյություն ունեն նաև ստորադասական նախադասությունների ամբողջությամբ անհետացման : Նման պնդումներն անհիմն են, քանզի նշված կառույցները սկզբունքորեն իրացվում են լեզվական հաղորդակցման տարբեր ոլորտներում՝ սկսած առօրյա խոսակցական լեզվից, խոսվածքներից մինչև գրավոր խոսք: Մամուլի լեզվում ստորադասական նախադասությունների դիրքն այնքան կայուն է, որ սա կարող է բավարար հիմք հանդիսանալ հաստատելու, որ դրանք կիրառությունից դուրս չեն գա:

Այսպիսով, կարող ենք նշել, որ գոյականական խմբի զարգացումը բնութագրական է եղել լեզվի զարգացման բոլոր փուլերում, իսկ այսօր այն աչքի է ընկնում իր ծավալի ընդարձակմամբ և անհամեմատ հաճախակի գործածությամբ: Վերջինիս իրացումը տարբեր գործառնական ոճերում միանշանակ տարբեր է, ընդ որում՝ գիտության ոլորտում կառույցի աճն իսկապես նկատելի է: Հարկ է նշել, որ շարահյուսական այս կառույցի նման զարգացումն անվերապահորեն արդյունք է լեզվական խնայողության:

Գերմաներենի միտումնային փոփոխությունների շարքում առանձին տեղ է գրավում նաև շրջանակային կառույցների հետ կապված «շրջանակազերծման» միտումը, որի էությունն այն է, որ նախադասության այն տարրերը, որոնք սովորաբար գտնվում են համապատասխան շրջանակաձև կառույց կազմող միավորների միջև, իրենց դիրքը փոխում են: Այդ փոփոխությունները նկատվում են այն դեպքերում, երբ համապատասխան շրջանակային կառույցը սովորականից ավելի է ծավալվում և դրա սահմաններն ադոտանում են (Գաբրիելյան, 2006:91, 92):

Է. Էրբենի կարծիքով «շրջանակազերծումներն» առավել բնութագրական են առօրյա խոսակցական լեզվին, և գործառնական տեսանկյունից այս միտումը հեշտացնում է հաղորդակցական գործընթացը (Er **kam** schneller als erwartet **zurück**./Er **kam** schneller **zurück** als erwartet. Er **hat** einen Wunsch, der kaum erfüllbar ist, **geäußert**./Er **hat** einen Wunsch **geäußert**, der kaum erfüllbar ist.) (Erben, 1968:133):

Ռ. Ռաթը շրջանակման/շրջանակազերծման վերաբերյալ իր ուսումնասիրություններում նշում է, որ շրջանակազերծման են ենթարկվում հիմնականում բաժանվող նախածանցով բայերը: Ըստ նրա՝ որքան երկար է նախադասությունը, այնքան հաճախակի են բայական շրջանակային կառույցում անջատական նախածանցով բայերի շրջանակազերծումներ տեղի ունենում (Rath, 1965:217):

Ժամանակակից գերմաներենում արդեն շրջանակազերծումը չի կարելի համարել շեղում ընդհանուր կանոնից և որպես շարահյուսական կառույց՝ պահանջում է առանձնակի և մանրազնին ուսումնասիրություն: Անվանական շրջանակային կառույցների դեպքում շրջանակազերծումները դրսևորվում են հիմնականում (հատկապես հարաբերական) նախադասություններում, ինչպես՝ Er hat die Werke von Lessing, Goethe und Schiller, welche [er bereits in seiner Jugend] gelesen hatte, sehr verehrt, որի բացմամբ ունենում ենք Er hat die Werke von Lessing, Goethe und Schiller sehr verehrt, welche [er bereits in seiner Jugend] gelesen hatte: Վերջին իրողությամբ ի հայտ է գալիս գերմաներենի շա-

րահյուսական մեկ այլ տիպաբանական յուրահատկություն, որը վերաբերում է ոչ թե նախադասության առանձին անդամների դիրքին, այլ նախադասության տարբեր հատվածների համակցմանը (Գաբրիելյան, 2006:92):

Ժամանակակից գերմաներենի ներլեզվական միտումների առանձնահատկություններն ուսումնասիրելիս սեռի քերականական կարգին անդրադառնալը ևս կարևոր խնդիր է: Այսօր սեռի քերականական կարգը ներկայանում է ներգործական (Ingo öffnete die Tür), գործողության կրավորական (Die Tür wurde (von Ingo) geöffnet) և վիճակի կրավորական (die Tür war geöffnet) մրցակցային ձևերով: Շատ դեպքերում նշվում է, որ գրավոր լեզվում ներգործական և կրավորական սեռերը շատ անհավասարաչափ են բաշխված: Սակայն, ինչպես հայտնի է, յուրաքանչյուր վիճակագրական տվյալ միայն հարաբերական արժեք ունի, քանի որ ներգործական/կրավորական հակադրությունը լեզվագործածության տարբեր ոլորտներում տարբեր կերպ է իրացվում:

Վ. Այլվերը և Կ. Բյունթինգը, ներկայացնելով սեռի համակարգը, նշում են, որ ներգործական, գործողության կրավորականի և վիճակի կրավորականի սեռերը միմյանցից տարբերվում են երեք հատկանիշներով. 1) գործող անձի առկայություն և բացակայություն, 2) գործողության կողմնորոշում, 3) վիճակի կողմնորոշում: Ներգործական սեռը միշտ պահանջում է գործող անձի առկայություն, գործողության կողմնորոշում և գործող անձի պարտադիր նշում: Գործողության կրավորականը չի պահանջում պարտադիր կերպով գործող անձի առկայություն, նույնը նաև վերաբերում է վիճակի կրավորականին, միայն այս դեպքում կողմնորոշումը ոչ թե գործողությունն է, այլ վիճակը: Ընդ որում՝ վիճակի կրավորականն առանձնացնում է երկու տեսակ (Die Tür ist geöffnet worden./Die Tür ist geöffnet և Die Regale sind mit Staub bedeck.), որոնցից մեկը (տվյալ դեպքում առաջին օրինակը) կարծես հիշեցնում է գործողության կրավորականը:

Առավել հետաքրքրական են ժամանակակից գերմաներենում գործողության կրավորականի մրցակցային ձևերը: Վերջին ժամանա-

կաշրջանում դրանք այնպիսի աճ են ապրել, որ շատ լեզվաբաններ խոսում են «կրավորական դաշտի» մասին, որտեղ կրավորականի հարացույցի կողքին ներառված են բայական այնպիսի կառույցներ, որոնք կարող են համարվել կրավորական կառույցի հոմանիշներ: Դրանք են՝ bekommen/erhalten/kriegen + հարակատար II (Er bekommt/erhält/kriegt das Buch geschenkt), որն անվանվում է Rezipientenpassiv «ստացական կրավորական» և kriegen, bekommen բայերի դեպքում առավել հաճախ գործածվում է առօրյա խոսակցական լեզվում: Այս կառույցն, այնուամենայնիվ, բավականին վիճահարույց է, քանի որ bekommen, kriegen և erhalten «օժանդակ բայերը» իմաստային առումով գրեթե չեն տարբերվում համապատասխան լիմաստ բայերից: Բացի այդ, ժամանակակից գերմաներենում bekommen, kriegen, erhalten բայերով նմանատիպ կառույցներ առկա են, և Wir bekommen die Wohnung renoviert նախադասությունը կարելի է մեկնաբանել տարբեր ձևերով: Մի դեպքում այն կարող է հետևյալ ներգործական նախադասության՝ Jemand renoviert uns die Wohnung, կրավորական փոխակերպումը հանդիսանալ, մյուս դեպքում խոսքը bekommen լիմաստ բայի և renoviert ստորոգելիական վերադրի (որը վերաբերում է die Wohnung խնդրին) մասին կարող է լինել: Այս դեպքում կառույցը կարելի է հետևյալ կերպ ձևակերպել՝ Wir bekommen die Wohnung in einem renovierten Zustand: Մեկ այլ դեպքում էլ Wir bekommen die Wohnung renoviert նախադասությունը կարելի է հետևյալ կերպ ձևակերպել՝ Wir schaffen es, die Wohnung zu renovieren.

Այնուամենայնիվ, նշված տարբերակներից առանձնանում է կրավորականն իր շարահյուսական կառույցներով, որոնք դիրքային տարբեր իրացումներ են ցուցաբերում: Այսպես, օրինակ, կրավորականի դեպքում հարակատար II դերբայը՝ որպես բարդ բայական կառույցի մաս, նախադասության աջ շրջանակում է, իսկ ազատ ստորոգելիական վերադրի՝ դրան հակառակ՝ միջին դաշտում (Wir bekamen das Auto vom Händler gewaschen /Wir bekamen das Auto gewaschen vom Händler): Բացի այդ, կրավորականի դեպքում հարակատար II դերբայը առ-

ժխտական մասնիկ չի կարող ընդունել, ինչը ստորոգելիական վերադրի դեպքում արդեն որպես ածական հնարավոր է (ինչպես՝ Wir bekommen das Auto ungewaschen vom Händler) (Gabrieljan, 2008:41-47):

Այսպիսով, կրավորական կառույցի հետևյալ՝
gehören+հարակատար II դերբայ (Dieses Verhalten gehört bestraft)
sich lassen + անորոշ դերբայ (Das Fenster lässt sich öffnen)
sein/bleiben +zu+ անորոշ դերբայ (Der Schmerz ist kaum zu ertragen)
բարդ բայական կառույց (Er bringt die Frage zur Entscheidung)
անդրադարձ կառույցներ (Das Buch verkauft sich gut)
բառակազմական միջոցներ (Der Platz ist unbespielbar)

հոմանիշներն իրացվում են տարբեր իրավիճակներում և այնքան հաճախ, որ դրանք այլևս չեն դիտվում որպես արտառոց կառույցներ: Կրավորական սեռի ընտրությունը շատ դեպքերում պայմանավորված է ոճական նկատառումներով, քանզի վեջինիս միջոցով հեղինակի խոսքն ավելի տպավորիչ կարող է լինել ընթերցողի/ունկնդրի համար:

Կրավորական սեռի հաճախ կիրառության հիմնավորման համար մեկ այլ կարևոր հանգամանք է այն, որ գործող անձի նշումն այնքան էլ պարտադիր չէ (Der Fluß wurde verunreinigt/Die Diäten sind erhöht worden և այլն):

Այսպիսով, վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ գոյականական խմբի և երկրորդական նախադասությունների կիրառման հարցում նկատելի է գոյականական խմբի ծավալման, իսկ երկրորդական նախադասությունների՝ նվազ գործառական հաճախականության միտումը: Ինչ վերաբերվում է շրջանակային կառույցներին, ապա վերջիններիս հարցում հստակ տեսանելի է շրջանակագերծման միտումը: Միտումնային փոփոխությունների շարքում իր ուրույն տեղը զբաղեցնող «կրավորական դաշտի» վերլուծությունը ցույց է տալիս, որ կրավորական հարացույցի կողքին ներառված են բայական այնպիսի կառույցներ, որոնք կարող են համարվել կրավորական կառույցի հոմանիշներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Գաբրիելյան Յու.** (2006), Գերմաներեն լեզվի տիպաբանություն, Երևան, Երևանի համալս. հրատ.:
2. **Braun P.** (1979), Internationalismen-Gleiche Wortschatze in europäischen Sprachen //Muttersprache, Wiesbaden, Gesellschaft für Deutsche Sprache, N 84.
3. **Duden.** (1983), Deutsches Universalwörterbuch. Die authentische Darstellung des Wortschatzes der deutschen Sprache, Mannheim, Bibliographisches Institut.
4. **Eggers H.** (1983), Wandlungen im deutschen Satzbau. Vorzüge und Gefahren // Muttersprache, Wiesbaden, Gesellschaft für deutsche Sprache, N 93.
5. **Eichler W.** (1976), Bunting K. Deutsche Grammatik. Form, Leistung und Gebrauch der deutschen Gegenwartssprache, Kronberg im Taunus, Scriptor.
6. **Erben J.** (1968), Deutsche Grammatik. Ein Leitfaden, Frankfurt am Main, Fischer-Taschenbuch.
7. **Gabrieljan Ju.** (2008), Deutsche Grammatik in Theorie und Praxis, Jerewan, Verlag der Universität Jerewan.
8. **Korn K.** (1962), Sprache in der verwalteten Welt, München, dtv Deutscher Taschenbuch Verlag.
9. **Polenz von P.** (1984), Entwicklungstendenzen des deutschen Satzbaus, Göttingen, Vandenhoeck und Ruprecht.
10. **Rath R.** (1965), Trennbare Verben und Ausklammerung // Wirkendes Wort, Schwann-Pagel, N 15.

Խանոյան Նելլի – բ.գ.թ., ասիստենտ, ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի գերմանական բանասիրության ամբիոն, էլ. փոստ` nellykhanoyan@yahoo.com:

Ներկայացվել է խմբագրություն` 30.11.21, տրվել է գրախոսության` 07.12.21 - 14.12.21, երաշխավորվել է ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի գերմանական բանասիրության ամբիոնի կողմից, ընդունվել է տպագրության` 25.12.21: